



# ՌՈՒՔԵՆ ՍՆԱԿ

## Երթա՛լ

Երթալ, երթալ, երթալ անձայն, անհանդէս.  
Երթալ առուին պէս մարզերու տակ անտես.  
Կապոյտին մէջ՝ հեզ, հողմնավար ամպին պէս . . .

Երթա՛լ՝ առանց գիտնալու թէ դէպի ո՞ր.  
Երթալ հեռու ոստաններէն այս տըխտոր,  
Երթա՛լ խաւար գիշերին մէջ թաքթաքոր . . .

Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ առանց ճրագի.  
Երթա՛լ առանց սուգի, լացի, փափագի.  
Երթա՛լ՝ առանց սովի, պապագի . . .

Երթալ՝ մարդոց կոյտին մէջէն լըռելեայն.  
Օտար մընալ իրենց ցաւին, գիտութեան.  
Երթա՛լ տգէտ, խուլ, համբր, կոյր յաւիտեան . . .

Չըգիտնալ որ հոս Իտէալը չիկայ . . .  
Ուխտագնաց երթալ ափերն հեռակայ,  
Դէպի ուղին Երջանկութեան մշտակայ . . .

Աննիթանա՛լ, անրջանա՛լ, վրսեմ, վես.  
Երթալ անցա՛յգ, անա՛յգ, երթալ վերջապէս  
Աչքերը գոց՝ ցայգաշրջիկ խեղճին պէս . . .

Երթա՛լ՝ երթա՛լ շը ճանչնալ Մարդ ու Աստուած,  
Ջոյգ երթալ՝ քո՛յր ձեռքդ ձեռքի մէջ դրած  
Անրջանքին ու Սիրոյն պէս Աքտրուած . . .